Կարգապահական գործ թիվ 22011

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2022թ-ի հուլիսի 26-ի թիվ 28-րդ ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ԹԻՎ ԿԳ/16-Ա

ՓԱՍՏԱԲԱՆ ՐԱՖՖԻ ՎՈՐՈՆՑՈՎԻ ԱՍԼԱՆՅԱՆԻ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդը **(այսուհետ նաև՝ Խորհուրդ)**, նիստը նախագահող՝ Խորհրդի անդամ Հորություն Հարությունյանի, Խորհրդի անդամներ՝ Մելանյա Առուստամյանի, Ռուբեն Հակոբյանի, Արսեն Հարությունյանի, Լիլիթ Ղազանչյանի, Կարեն Սարդարյանի, Մարինե Ֆարմանյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,

քննության առնելով փաստաբան Ռաֆֆի Վորոնցովի Ասլանյանի (արտոնագիր՝ թիվ 1586), կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը՝

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. <u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>

«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ գործադիր տնօրեն՝ Ա.Խաչատրյանը **(այսուհետ՝ նաև Դիմող)**, դիմելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ (այսուհետ՝ նաև Պալատ), հայտնել է, որ փաստաբան Ռաֆֆի Ասլանյանն **(այսուհետ՝ նաև Փաստաբան)** իր ֆեյսբուքյան էջում 15.03.2022թ. կատարել է հրապարակային գրառում հետևյալ բովանդակությամբ.

«Յուրաքանչյուր իշխանություն ունի իր արտոնյալներն ու անպատժելիները, ինչի արդյունքում նյութական մեծ վնասներ են կրում երկրի «հպարտ» քաղաքացիները. ՀՀ Աժ պատգամավոր Խաչատուր Սուքիասյանի ընտանիքի հետ փոխկապակցված «Հայէկոնոմբանկը» հրաժարվում է վերադարձնել քաղաքացիների հարյուր հազարավոր դոլլարների երկարամյա ավանդներն ու վճարել դրանց դիմաց տոկոսները: Ընդ որում, ավանդները բանկից կեղծ փաստաթղթերի օգտագործմամբ յուրացվել են նույն բանկի

մասնաճյուղի կառավարիչի կողմից, իսկ դատարանում քննվող քրեական գործով բանկն ունի փուժողի դատավարական կարգավիճակ: Քաղաքացին փաստորեն «մեղավոր» է միայն նրանում, որ խնայված գումարները վստահել է այս բանկին: Այսինքն, իշխանամերձ այս բանկում նույնիսկ ավանդի վերադարձը երաշխավորված չէ՝ հենց բանկի այդպիսի արտոնյալ կարգավիճակով պայմանավորված: Նկարագրվածը հաշվի առնելով՝ քաղաքացիներին խորհուրդ եմ տալիս, հափշտակություններից, նյութական վնասներից խուսափելու նպատակով, այսուհետև զերծ մնալ «Հայէկոնոմբանկի» հետ որևէ տեսակի գործարք կնքելուց»:

Դիմողը հայտնել է, որ Փաստաբանի կողից հրապարակված գրառմամբ խախտվել է փաստաբանական գաղտնիք պահպանելու սկբունքը, որն ամրագրված է փաստաբանի վարքագծի կանոնագրքով, ինչպես նաև «Փաստաբանության մասին» օրենքով: Դիմողը հավելել է, որ վերջինիս կողմից արված գրառմամբ արատավորվել է բանկի գործարար համբավը, որի արդյունքում բանկը կրել է նյութական վնասներ:

Դիմողը, որպես իրավական հիմք նշել է «փաստաբանի վարքագծի կանոնագրքով» սահմանված 2.2.1, 2.2.2, 2.3.1, 2.3.2, 2.3.3 և 2.3.4 կետերը և խնդրել է փաստաբանին ենթարկել կարգապահական պատասխանատվության:

2. <u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>

Պալատի նախագահի 21.04.2022թ. թիվ 80-Ա/ԿԳ-22011 որոշմամբ փաստաբան Ռաֆֆի Վորոնցովի Ասլանյանի նկատմամբ «Փաստաբանության մասին» օրենքի (**այսուհետ՝ նաև Օրենք**) 19-րդ հոդվածի 2-րդ կետի և Պալատի ընդհանուր ժողովի կողմից 19.10.2019թ.-ի թիվ 1-Լ որոշմամբ նոր խմբագրությամբ հաստատված փաստաբանի վարքագծի կանոնագրքի (**այսուհետ՝ նաև Կանոնագիրք**) 2.2.2 ենթակետի խախտման հատկանիշներով հարուցվել է կարգապահական վարույթ:

25.04.2022թ. կարգապահական գործը հանձնվել է կարգապահական գործը նախապատրաստող անձ Կարեն Քամալյանին (**այսուհետ՝ նաև Նախապատրաստող**):

3. <u>Դիմողի և Պատասխանողի համառոտ բացատրությունները, վկաների ցուցմունքները.</u>

<u>3.1. Դիմողի համառոտ բացատրությունները.</u>

Դիմողը Խորհրդի նիստին չի ներկայացել՝ չնայած դրա ժամանակի և վայրի մասին պատշաճ ծանուցված լինելու հանգամանքին:

<u>3.2. Փաստաբանի կողմից ներկայացված բացատրությունը</u>

25.03.2022 թվականին փաստաբան Ռաֆֆի Ասլանյանը ներկայացրել է բացատրություն, որում ըստ էության հայտնել է, որ իր կողմից սոցիալական ցանցում կատարված գրառմամբ չի հրապարակվել փաստաբանական կամ նախաքննական գաղտնիք կազմող որևէ տեղեկատվություն, ինքը նշված գրառմամբ հանրության շրջանում որևէ թյուր կարծիք ձևավորելու նպատակ չի ունեցել, խոսել է՝ վստահորդի շահերից ելնելով՝ քրեական գործի նախաքննությամբ հաստատված տվյալները և բանկի վարքագիծը հաշվի առնելով, ուստի բանկի գործարար համբավն ինքը չի արատավորել: Ինչ վերաբերում է բանկի հետ գործարքներից զերծ մնալու խորհրդին, ապա այն դարձյալ համապատասխանում է իր վստահորդի լավագույն շահերին բացի այդ, նման խորհուրդը բանկի գործողություններից բխող իրավաչափ եզրահանգում է, ինչով ևս ինքը չի խախտել փաստաբանի վարքագծի որևէ պահանջ, չի արտահայտում վիրավորանք կամ զրպարտություն պարունակող տեղեկություններ: Ըստ փաստաբանի՝ զարմանալի է բանկի դիմումի այն պատճառաբանությունը, որ իր գրառումից հետո արձանագրվել է ավանդների պայմանագրերի վաղաժամ լուծման դեպքերի կտրուկ աճ, քանի որ բանկի կողմից Պալատին դիմումը ներկայացվել է իր ֆեյսբուքյան գրառումից ժամեր անց, իսկ բանկն իր «վիճակագրությունը» հիմնավորող որևէ ապացույց չի ներկայացրել:

Փաստաբանը ներկայացել է Խորհրդի նիստին և ըստ էության վերահաստատել գրավոր բացատրությամբ իր հայտնած դիրքորոշումը:

3.3. <u>Վկաների ցուցմունքները.</u>

Սույն գործով վկաներ չեն ներգրավվել:

4. <u>Կարգապահական գործ նախապատրաստողի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը խորհրդին.</u>

Կարգապահական գործի նախապատրաստման արդյունքում Նախապատրաստողը 23.06.2022թ. ին կազմել է եզրակացություն:

Կարգապահական գործը Պալատի խորհրդին է հանձնվել 27.06.2022թ.-ին:

Խորհրդի նիստը տեղի է ունեցել 26.07.2022թ. ժամը 19:00-ին ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

5. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

Պալատի ընդհանուր ժողովի կողմից 19.10.2019 թվականի թիվ 1-Լ որոշմամբ նոր խմբագրությամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի հավելվածը հանդիսացող «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման» կարգի (այսուհետ՝ նաև Կարգ) 3.10.3 ենթակետի համաձայն՝ *Խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը,*

բացառությամբ այն դեպքի, երբ գործում գտնվող ապացույցները կամ Խորհրդին ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում Խորհուրդն այլ եզրահանգման է գալիս:

Խորհուրդը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը.

Փաստաբան Ռաֆֆի Ասլանյանը «Ֆեյսբուք» սոցիալական ցանցում կատարել է հետևյալ գրառումները.

- «Յուրաքանչյուր իշխանություն ունի իր արտոնյալներն ու անպատժելիները, ինչի արդյունքում նյութական մեծ վնասներ են կրում երկրի «հպարտ» քաղաքացիները. ՀՀ Աժ պատգամավոր Խաչատուր Սուքիասյանի ընտանիքի հետ փոխկապակցված «Հայէկոնոմբանկը» հրաժարվում է վերադարձնել քաղաքացիների հարյուր հազարավոր դոլլարների երկարամյա ավանդներն ու վճարել դրանց դիմաց տոկոսները: Ընդ որում, ավանդները բանկից կեղծ փաստաթղթերի օգտագործմամբ յուրացվել են նույն բանկի մասնաճյուղի կառավարիչի կողմից, իսկ դատարանում քննվող քրեական գործով բանկն ունի տուժողի դատավարական կարգավիճակ: Քաղաքացին փաստորեն «մեղավոր» է միայն նրանում, որ խնայված գումարները վստահել է այս բանկին: Այսինքն, իշխանամերձ այս բանկում նույնիսկ ավանդի վերադարձը երաշխավորված չէ՝ հենց բանկի այդպիսի արտոնյալ կարգավիճակով պայմանավորված: Նկարագրվածը հաշվի առնելով՝ քաղաքացիներին խորհուրդ եմ տալիս, հափշտակություններից, նյութական վնասներից խուսափելու նպատակով, այսուհետև զերծ մնալ «Հայէկոնոմբանկի» հետ որևէ տեսակի գործարք կնքելուց»:

Սույն փաստը հաստատվում է փաստաբանի՝ սոցիալական ցանցի անձնական էջի արտատպումով:

6. <u>Փաստաբանի անձը բնութագրող հանգամանքները.</u>

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից տրված տեղեկանքի համաձայն՝ Ռաֆֆի Ասլանյանը փաստաբան է հանդիսանում 14.01.2013թ., և 2020-2022թ. վերջինիս նկատմամբ կարգապահական վարույթ չի հարուցվել, չհաշված սույն կարգապահական վարույթը:

7. <u>Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Խորհուրդը գտնում է, որ Պալատի նախագահի կողմից 21.04.2022թ. թիվ 80-Ա/ԿԳ-22011 որոշմամբ փաստաբան Ռաֆֆի Ասլանյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը ենթակա է կարճման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է պահպանել սույն օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները:*

Կանոնագրքի 2.2.2 ենթակետի համաձայն՝ *մասնագիտական, հասարակական, հրապարակախոսական կամ այլ բնագավառում (ոլորտում) փաստաբանը պետք է խուսափի այնպիսի վարքագծից (գործողությունից կամ անգործությունից), որը կարող է կասկածի տակ դնել կամ խաթարել փաստաբանի կամ փաստաբանության նկատմամբ վստահությունը կամ հարգանքը:*

Կանոնագրքի նշված իրավադրույթի խախտման փաստը պարզելու համար Խորհուրդն անհրաժեշտ է համարում պատասխանել հետևյալ հարցադրմանը՝

- արդյոք փաստաբանը, օգտվելով իր ազատ արտահայտվելու իրավունքից, կասկածի տակ է դրել կամ որևէ կերպ խաթարել է փաստաբանի կամ փաստաբանության նկատմամբ վստահությունը կամ հարգանքը:

Անդրադառնալով նշված հարցադրմանը Խորհուրդն անհրաժեշտ է համարում վկայակոչել հետևյալը.

Կանոնագրքի 1.1 ենթակետի համաձայն՝ իրավունքի գերակայության հանդեպ ունեցած հարգանքի վրա հիմնված հասարակության մեջ փաստաբանը հատուկ դեր է ստանձնում: Փաստաբանի պարտականությունները չեն սկսվում և ավարտվում միայն հանձնարարականների բարեխիղճ կատարմամբ: Փաստաբանը կոչված է ծառայել արդարադատության շահերին, ինչպես նաև այն իրավունքներին ու արտոնություններին, որոնք նրան վստահել են պաշտպանելու իր վստահորդի շահերը: Փաստաբանի մասնագիտական գործունեության հանդեպ հարգանքը կարևոր պայման է հասարակության մեջ իրավունքի գերակայության և ժողովրդավարության համար:

Կանոնագրքի 1.2 ենթակետի համաձայն՝ մասնագիտական գործունեության սկզբունքները ձևավորվել են Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կողմից, երաշխավորելու փաստաբանի պատշաճ գործունեությունը, ինչին բոլոր քաղաքակիրթ հասարակությունները կարևոր նշանակություն են տալիս: Սկզբունքների ձևավորման համար կարևոր նշանակություն են ունեցել Հայաստանի Հանրապետության փաստաբանների կողմից ձևավորված ավանդույթները, ինչպես **նաև Եվրոպայի փաստաբանների միությունների և իրավական համայնքների խորհրդի կողմից սահմանած «Եվրոպայի փաստաբանների համար վարքագծի կանոնագրքի» դրույթները:**

Եվրոպայի փաստաբանների միությունների և իրավական համայնքների խորհրդի (այսուհետ՝ նաև CCBE) կողմից հաստատված եվրոպական իրավական մասնագիտության հիմնական սկզբունքների վերաբերյալ կոմենտարների «դ» կետի համաձայն՝ փաստաբանը, որպեսզի հարգվի իր վստահորդների, երրորդ անձանց,

դատարանների և պետության կողմից, պարտավոր է արժանանալ այդ հարգանքին: Դա հնարավոր է անդամագրվելով հեղինակային մասնագիտությանը. հետևաբար, փաստաբանը չպետք է անի այն ամենը, ինչը կարող է հեղինակազրկել ինքն իրեն կամ առհասարակ փաստաբանությանը, որպես մասնագիտություն, կամ թուլացնել տվյալ մասնագիտության նկատմամբ հասարակության վստահությունը: Դա չի նշանակում, որ փաստաբանը պետք է լինի կատարյալ անձնավորություն, բայց դա նշանակում է, որ նա չպետք է ցուցաբերի ոչ հարիր վարքագիծ, թե փաստաբանություն, թե այլ տեսակի գործունեություն իրականացնելիս, թե նույնիսկ մասնավոր կյանքում, որով հնարավոր է որ վարկաբեկվի տվյալ մասնագիտությունը:

ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է՝ *յուրաքանչյուր ոք ունի իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք: Այս իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալու, ինչպես նաև առանց պետական և տեղական ինքնակառավարման մարմինների միջամտության և անկախ պետական սահմաններից՝ տեղեկատվության որևէ միջոցով տեղեկություններ ու գաղափարներ փնտրելու, ստանալու և տարածելու ազատությունը:*

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *փաստաբանական գործունեությունն իրավապաշտպան գործունեության տեսակ է, որն իրականացնում է փաստաբանը և ուղղված է իրավաբանական օգնություն ստացող անձի իրավունքների, ազատությունների և շահերի իրականացմանն ու պաշտպանությանը՝ օրենքով չարգելված բոլոր միջոցներով և եղանակներով*:

Անկախության սկզբունքը փաստաբանական գործունեության առանցքն է: Այն, լինելով հիմնարար պարտավորություն փաստաբանի մասնագիտական գործունեություն ծավալող անձանց համար, դրսևորվում է երկու հիմնական բաղադրիչների տեսքով. արտաքին անկախությունը, որը ենթադրում է փաստաբանի անկախությունը՝ որպես մասնագիտական գործունեությամբ զբաղվելու երաշխիք, և երկրորդը՝ ներքին անկախությունը, որը ենթադրում է վստահորդին օրենքով չարգելված եղանակներով իրավաբանական օգնություն տրամադրելու ազատությունը:

Տվյալ դեպքում Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու հիմքում դրվել է վերջինիս կողմից կատարված հետևյալ հրապարակումը. *«Յուրաքանչյուր իշխանություն ունի իր արտոնյալներն ու անպատժելիները, ինչի արդյունքում նյութական մեծ վնասներ են կրում երկրի «հպարտ» քաղաքացիները. ՀՀ Աժ պատգամավոր Խաչատուր Սուքիասյանի ընտանիքի հետ փոխկապակցված «Հայէկոնոմբանկը» հրաժարվում է վերադարձնել քաղաքացիների հարյուր հազարավոր դոլլարների երկարամյա ավանդներն ու վճարել դրանց դիմաց տոկոսները: Ընդ որում, ավանդները բանկից կեղծ փաստաթղթերի օգտագործմամբ յուրացվել են նույն բանկի մասնաճյուղի կառավարիչի կողմից, իսկ դատարանում քննվող քրեական գործով բանկն ունի տուժողի դատավարական*

կարգավիճակ: Քաղաքացին փաստորեն «մեղավոր» է միայն նրանում, որ խնայված գումարները վստահել է այս բանկին: Այսինքն, իշխանամերձ այս բանկում նույնիսկ ավանդի վերադարձը երաշխավորված չէ՝ հենց բանկի այդպիսի արտոնյալ կարգավիճակով պայմանավորված: Նկարագրվածը հաշվի առնելով՝ քաղաքացիներին խորհուրդ եմ տալիս, հափշտակություններից, նյութական վնասներից խուսափելու նպատակով, այսուհետև զերծ մնալ «Հայէկոնոմբանկի» հետ որևէ տեսակի գործարք կնքելուց»:

Խորհուրդը, հաստատված համարելով վերոգրյալ փաստը, միաժամանակ գտնում է, որ այս գրառումն ինքնին բովանդակային առումով դուրս չէ մի շարք վերը վկայակոչված կարծիքն ազատ արտահայտելու թույլատրելի շրջանակներից, հետևաբար չի կարող գնահատվել որպես Կանոնագրքի 2.2.2 ենթակետի խախտում:

Ավելին՝ կարգապահական գործի քննության շրջանակներում փաստաբանը հայտնել է, որ նշված գրառմամբ ինքը հրապարակել է իր վստահորդի գործի վերաբերյալ տվյալներ, ինչը կատարելիս ունեցել է վստահորդի կողմից տրված համաձայնություն, և նշված ձևով ինքն իրացրել է վստահորդին օրենքով չարգելված եղանակով իրավաբանական օգնություն տրամադրելու իր իրավունքը:

Ի հակադրումն նշվածի, չնայած, որ խորհրդի նիստի ներկայանալը կողմերի իրավունքն է,այլ ոչ թե պարտականությունը և կողմի չենրկայանալը չի կարող գնահատվել ի վնաս չներկայացող կողմի, այնուամենայնիվ փաստաբանի մի շարք, այդ թվում նշված փաստարկը, որևէ կերպ չի հերքվել:

Խորհրդի գնահատմամբ փաստաբանը չի կատարել այնպիսի արտահայտություններ որոնք կարող են վկայել վերջինիս կողմից ոչ պատշաճ վարվելակերպ դրսևորած լինելու մասին: Հետևաբար, դրա արդյունքում որևէ կերպ կասկածի տակ չի դրվել կամ խաթարվել իր կամ փաստաբանության նկատմամբ վստահությունը կամ հարգանքը:

Արդյունքում Խորհուրդը եզրահանգում է, որ Փաստաբանի վարքագիծըամբողջությամբ տեղավորվում է վերջինիս՝ որպես իրավապաշտպան գործունեություն իրականցնող սուբյեկտի, օրենքով չարգելված միջոցներով ու եղանակներով իր վստահորդին իրավաբանական օգնություն տրամադրելու վարքագծի տիրույթում:

Օրենքի 39.8-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ *փաստաբանների պալատի խորհուրդը կարճում է փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ վարույթն այն դեպքում, երբ հիմնավորված չէ փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքի առկայությունը*:

Նման պայմաններում Խորհուրդը հաստատված չի համարում փաստաբան Ռաֆֆի Ասլանյանի արարքում Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի և Կանոնագրքի 2.2.2 ենթակետի խախտման հատկանիշների առկայությունը, ուստի գտնում է, որ վերջինիս նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը ենթակա է կարճման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» օրենքի 10-րդ հոդվածի, 39-րդ հոդվածի, 39.7-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի, 39.8-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, և Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի 6.1.1 (2) ենթակետի պահանջներով՝

Խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Փաստաբան Ռաֆֆի Վորոնցովի Ասլանյանի (արտոնագիր՝ թիվ 1586) նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը կարճել:

2. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

<u>Ծանոթություն.</u> *Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:*

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝ Հարություն Հարությունյան

26 հուլիսի 2022թ.
թիվ ԿԳ/16-Ա
ք. Երևան